

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանայի բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

23-րդ ՏԱՐԻ

23-րդ ՏԱՐԻ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղու-
թեամբ: Մեր ստանում ենք սեփական ՀԱՅԱՍՏԱՆԻՆԻՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տան և
մէկ և տան ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսակա-
նը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ»-ը գրվել կարելի է ԽՐԱՎԱԿԱՆԱՆԸ (Բաղադրանքային և Բարոյական փոփոխությունների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ը գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ Թիֆլիսից հայերի մասին. Մամուլը
և Թիֆլիսից հայերի հարցը. Միսի Միսիսի կաթո-
ղիկոսը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի բացատրու-
թիւն. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսից. Նամակ
Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ՀԱՅԱՍՏԱՆԻՐ.—
ՅԱՅԱՍՏԱՆԻՐԻ ԹԻՖԼԻՍԻՆԻՐ.—ԱՆԱՍՏԱՆԻՐ. Գաղ-
թականներ.

ՀԱՅԱՍՏԱՆԻՐԻ ԹԻՖԼԻՍԻՆԻՐ ՄԱՍԻՆ (Հեռագրով)

Մեզ հեռագրում են Մոսկովայից դեկտեմ-
բերի 2-ից հետեւեալը. «Ռուսի» Ռուսի
Вѣдомости» հրատարակում հայկական հարցի
մասին երկու յօդուածներ տպագրելու մի ա-
ռաջնորդող և միւսն էլ պրոֆէսոր Կոմա-
րովսկու յօդուածը, որոնց մէջ այն կար-
ծիքն է յայտնվում, որ մեծ պետութիւն-
ները, թէ զաշնադիրների հիման վրա և թէ
մարտիրոսութեան բարձր սկզբունքներով,
պարտաւոր են օգնութիւն հասցնել Թիֆլիսից
հայերին և կտրական կերպով պահանջել
Բ. Դոնից, որ նա վերջապէս յարգէ հա-
յերին, ինչպէս մարդկանց, որոնք որպէս մար-
դիկ իրաւունք ունեն անձնական և կայքի
ապահովութեան վրա:

Մեր թղթակիցը մեզ հեռագրում է Պե-

տերբուրդից դեկտեմբերի 5-ին հետեւեալը.

«Լոնդոնից» «Нов. Время» լրագրին հե-
ռագրում են, որ կառավարչական շրջան-
ներում զոհ են, որ Բ. Դոնը ընդունեց
անցքերը քննելու նախագիծը, Անգլիայի,
Ֆրանսիայի և Ռուսաստանի հիւպատոսնե-
րի մասնակցութեամբ:

«Լոնդոնի» «Times» լրագրին շնորհաւո-
րում է Կիմբլէյի անգլո-ֆրանս-ռուսա-
կան բարեկամութեան շնորհագրական համար:

«Անգլիայի մահմադարները Լիվերպու-
լում միտինգ են կազմում բողոքելու Թիֆլի-
սից աղիտայի դէմ:

«Պետերբուրգի» «Новое Время» լրագի-
րը այն միտքն է յայտնում, որ Անգլիայի,
Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամանալը
եւրոպական խաղաղութեան ապահովու-
թեան ամենալաւ լուծումն է: Վերջինիս
լրագիրը քաղուածք է անում Բոստոնի լրա-
գրի անցեալ տարվայ յօդուածից, որը մատ-
նացոյց է անում, որ իբր թէ Սասունի
կոտորածները «հնչակիան» յեղափոխա-
կանների գործն է, որոնք մտադիր են այդ
ձանապարհով ազատութիւն ձեռք բերել:

«Կիւլիկայի» հայերը ենթարկվում են Թիֆլի-
սից իշխանութեան սարսափելի հալածանք-
ներին:

—Ո՛վ է:

Քիւրդերէն էր հարցումը: Պետոն կանգ առաւ:
Շնորհ այդ ժամանակ դադարեցին հաշիւուց, իսկ
ձայնը նորից լսվեց, որ այս անգամ հարցերից.

—Բարեկամ է:

Պետոն ալ ձեռքը շնորհաւորաձեւ բերնին դրեց, կը-
ռացաւ և նոյն լեզուով պատասխանեց.

—Բարեկամ է:

Դրանից յետոյ լռեց ամեն ինչ մի րօպէ: Ներ-
տասարդը համարձակ ջայլերով իջաւ ցած, եր-
բեմն դիմումը աւելի խշրտացնելով ձիւնի շեր-
տը:

Քանի ժողովում էր, նա աւելի պարզ տեսնում
էր մի քանի ստեղծեր, նոյն իսկ խրճիթների պա-
տեր: Քիւրդերը միման մէջ ծածկվում էին, ան-
շուշտ հրացանը ձեռքերին: Պետոն նոյնպէս աշ-
խատեց լոյսից խուսափել և երբ բաւական ժողով-
ցել էր, կանգ առաւ և գոչեց քիւրդերէն լեզուով.

—Ինչու են կրմանքները միմեկման մէջ մնում.
բազմաթիւ Ռոզիտ արդեօք թշնամի ցեղի հետ գործ
ունի:

Նա շատ լաւ գիտէր, թէ որպիսի ցեղեր են
Քիւրդ-գաղի քիւրդերը:

Բայց ոչ ոք նրան չը պատասխանեց: Պետոն
երկու քայլ էլ արաւ և մտաւ լոյսի մէջ:

—Լաւ ուրեմն, ասաց նա—թշնամի կամ բարե-
կամ, եթէ նամարդ էք, առանց դէմ ու դէմ գա-
լու խօսք չունի:

Այդ կէտ խօսքերը ազդեցութիւն ունեցան, իս-
կայ լոյսի մէջ երևացին երկու մուկաձեւ երկար
անձինք:

—Բազմաթիւները մեր բարեկամներն են, ասաց

ՄԱՍՈՒՆԻԸ ԵՒ ԹԻՖԼԻՍԻՆ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՑԸ

Թիֆլիսից հայերի հարցը, ինչպէս ճիշդ
նկատում է Պետերբուրգի լրագրից մէ-
կը, օրվայ քաղաքական հարցն է: Թէ
եւրոպական, թէ ռուսաց, թէ նոյն իսկ
ամերիկական մամուլը զբաղված է մի կող-
մից այն հարստահարութիւններով, որ
տեղի են ունենում Թիֆլիսից հայաստա-
նում, իսկ միւս կողմից այն միջոցներով,
որ ձեռք են առնում եւրոպական պետու-
թիւնները Թիֆլիսից հարցը վճռելու հա-
մար:

Վաշինգտոնից հեռագրում են, որ
նախագահ Վիլիզէնզի հրամանով Թիֆլի-
սից յանձնաժողովի հետ միասին կերթայ
Հայաստան Սիվասի ամերիկական հիւպա-
տոս իւլէտ: Ատում են, որ Անգլիան խնդ-
րել է Վիլիզէնզին՝ դէկտատ նշանակել նրա
համար, որպէս զի կարելի լինի անկողմ-
նապահ տեղեկութիւն ստանալ: Իւլէտ
ինքնուրոյն կերպով կը գործի և առան-
ձին տեղեկութիւններ կուղարկի յատկապէս
Վիլիզէնզին:

Լոնդոնի «Times» լրագրին հաւա-
տացնում է, որ Թիֆլիսից գործերի հրա-
մանատարը երգնկայում՝ Զէքի-փաշան, Սա-
սունի շրջանի զիւղերը և աւանները միտ-
նելու ժամանակ, անձամբ հրամայեց իր
զինուորներին՝ սպանել և կողոպտել: Առաջ
զինուորները չէին վստահանում հնազանդ-
վել մի այդպիսի հրամանին. մի քանիսն
մինչև անգամ ուղղակի յայտնեցին, որ իրանք
այդ հրամանը չեն կատարի, և միայն այն
ժամանակ, երբ փաշան բերել տուեց ու-
րիշ զօրաբաժիններ և հրամայեց նրանց
հրացանազարկ անել ապստամբներին, եթէ
նրանք երկարատեւ դիմադրութիւն կը ցոյց
տան, սկսվեց կոտորած հայկական գիւղե-
րում:

Աւստրիական մամուլը, որ կարծէք
թշնամական դիրք է բռնել դէպի հայոց
հարցը, աշխատում է հաւատացնել, որ
առհասարակ անգլիական լրագրից հա-
ղորդած տեղեկութիւնները վստահութեան

մէկը—համեմէք, սէր սէրան, սէր ճէվան... որ
կողմերից է գալիս իմ եղբայրը:

Խօսողը, նաև հետզհետէ լոյսի մէջ յայտնվող
հինգ—վեց քիւրդերը փաթեթված էին անթիւ
թաղեայ վերաբերւորների մէջ, դուրսնեմի թաղեայ
բէօլօղներ, և զինված մարթիին ընտիր հրա-
ցաններով:

Պետոն մի հայեացքով զննեց բոլորին. ոչ մի
դէմը պարզ չէր երևում, ծածկված էին վերաբերու-
թեան օձիքով:

—Մուշի երկրից եմ, ասաց նա:

—Շատ հեռուից է գալիս իմ եղբայրը, ասաց մի
ուրիշ քիւրդը.—բայց մեր զինք, աչքի վրա. իմ
եղբայրը բազմաթիւների էլ—աղապիսի է:

—Բազմաթիւների էլ—աղապիսի, խօսեց Պետոն—իմ
հայրը, հուշակաւոր իւստֆաղան է. իսկ դուք,
ինչ ցեղից էք:

—Խնուսի շէյխի մարդիկն են, պատասխանեց
առաջին քիւրդը միշտ թաղեայ միջից—շէյխը բազ-
մաթիւներին սիրում է. մենք լսել ենք իւստֆաղայի
անունը... իմ աղան եթէ քաղցած է, տունը իրն
է, մեր աչքի վրա է եկել:

—Վաղուց է ոտքի վրա եմ, խօսեց Պետոն,
եթէ իմ եղբայրները ինձ մի կտոր հաց հիւրասի-
րեն, ինձ շնորհակալ կանեն:

Քիւրդերից երկուսը դարձան դէպի խրճիթները.
Պետոն հրացանը ամենայն վստահութեամբ ուսին
գցեց և հետեւեց նրանց. իր ետինք գալիս էին
նաև միւս քիւրդերը, և այսպէս շրջապատված,
նա մտաւ մի խրճիթ:

Խրճիթը մի մեծ գոմ էր. մուկ անկիւններից
լսվում էին կնիքանիների որոճի և ուռնելու ձայ-

արժանի չեն: Օրինակ, «Neue Freie Pres-
se» լրագիրը մեղադրում է անգլիական
կառավարութեանը այն բանի մէջ, որ նա
հալածում է Թիֆլիսի Ռուսաստանին
հաճոյանալու համար:

Ա. Թէնքուտի, անցեալ կիրակի, այնտեղի
հայոց կոյսիան մի յիշատակաւոր մատու-
ցեց վեց մեծ պետութիւնների ներկայա-
ցուցիչներին, որով բողոքում է Սասունի
անցքերի դէմ և մասնացոյց անելով Բեր-
լինի զաշնագրի 61-դ յօդուածի վրա, պա-
հանջում է մեծ պետութիւնների միջամ-
տութիւնը:

Ատլանտեան ովկիանոսի այն կողմն
իսկ, Միացեալ-Նահանգներում, շարժում է
երևում յօդուած հայերի վաշինգտոնից հե-
ռագրում են, որ սենատոր Գոր մի առա-
ջարկութիւն արեց վաշինգտոնի սենատին՝
մի որոշում կայացնել, բացատրութիւններ
պահանջելով կառավարութիւնից Հայաս-
տանում տեղի ունեցած զաղանութիւնների
առիթով: Մի ուրիշ սենատոր, Բյանշար,
առաջարկեց մինչև անգամ բողոքել այդ
զաղանութիւնների դէմ և դիմել Թիֆլիսից
կառավարութեանը առաջարկութիւններով:

Ֆրանսիական մամուլը, որը մինչև
այժմ անտարբերութիւն էր ցոյց տալիս,
նոյնպէս սկսեց հայկական հարցով լուրջ կեր-
պով զբաղվել: Մի երկար յօդուածում քննելով
այն դրութիւնը, որ ստեղծվել է Սասունի
անցքերից, «Temps» լրագիրը վերջապէս
թեան մէջ ասում է. «Յայտնի է, որ Անգ-
լիան Բ. Դրան հետ կապեց այսպէս ա-
նուանված Կիւրոսի պայմանագիրը, որի
հիման վրա նա ոչ միայն դրաւում է Կիւր-
ոսը, այլ և իրաւունք ունի, և մինչև ան-
գամ պարտաւոր է հսկողութիւն ունենալ
Թիֆլիսի վարչութեան գործողութիւնների
վրա Հայաստանում: Յայտնի է նոյնպէս, որ
Բերլինի զաշնագրի 61-դ յօդուածը այդ
զաշնագիրը ստորագրող պետութիւններին
հսկողութեան իրաւունք է տալիս Հայաս-
տանում Ոչինչ այնպէս ցաւալի չէր լինի
ամեն տեսակետից՝ թէ Բ. Դրան համար
թէ հայերի համար և թէ պետութիւննե-

ներ. լայն բաժանումը մի լաւ կրակ լուսա-
ւոր բողոք լայն էր տալիս իր կողքին նստած
երկու-երեք կանանց և գրեթէ մերկ մանուկներին:

Պետոն քիւրդի մի փղբրիկ գիւղի մէջ էր:

Նրա ներս մտան բոլորը, այդտեղ միայն նա կա-
րողացաւ. զննել իր հիւրընկալների դէմքերը, որով-
հետեւ քիւրդերը երբ կրակին մօտեցան և նստե-
ցին, թաղիքի քաղցրեղ քիչ բաց արին և ցոյց
տուին դէմքերը:

Դաժան, սև և խորշմներով ախտված, բայց
առողջ, կրակոտ և խորազնուն կատակող աչքերը
արտայայտում էին միշտ լարված դրութիւն. նմա-
նում էին ամեն րօպէ վտանգի, կուսի սպասող ան-
ձերի: Նստելիս ամեն մէկը հրացանը ծնկների
վրա դրեց, յետոյ քիչ ձեռքերը կրակին պարզեց
և ապա սկսեց զննել հիւրին:

Շրջապատել էին խորշմը, կանաչ և մանուկ-
ները քաշվել էին դէպի մի մուկ անկիւն և այն-
տեղից երբեմն, կատուի աչքերի պէս փայլում
էին մի դույզ հետաքրքիր աչքեր:

Ամեն ոք լուռ էր. խօսքը տան մեծին էր պատ-
կանում, իսկ նա դեռ զննում էր իր հիւրին: Պե-
տոն մտախոհ դէմք ունէր, բայց վստահութեամբ
նայեց բոլորին, յետոյ աւելի լաւ տեղաւորվեց և
սպասեց: Նա անհամբերութիւնից մեռնում էր
իմաստաւ համար, ինչ որ ուզում էր:

Ինքը որտեղ էր գտնվում. սահմանից շատ հե-
ռու էր. ինչ ուղղութեան վրա. զաղթականները
երբ էին անցել և այլ այսպիսի բաղաձիւր հար-
ցեր կուտակվել էին նրա գլխում: Նա մի քանի
անգամ հարցական ակնարկով նայեց ալիստան
մազերով տանտիրոջ:

րի միաբանութեան համար, ինչպէս որ և պետութեան միայնակ գործողութիւնը, որը հիմնված է որ և է ուրիշ բանի վրայ, և ոչ թէ իրենից զանազան վրայ, որը Արեւելի խորհրդաւ է:

Լօնդոնի "Times" լրագիրը, խոշոր տառերով տպած մի նկատողութեան մէջ, յայտարարում է, որ խմբագրութեան մէջ ամենաճիշդ տեղեկութիւններ են ստացված Հայաստանից, որոնք այլ ևս ոչ մի կասկած չեն թողնում, որ այնտեղ, յիշատակ, գաղանկութիւններ են եղել կատարված: Այդ գաղանկութիւններին վերաբերեալ առաջին տեղեկութիւնները լրագիրը շատ թերահաւատութեամբ ընդունեց, բայց այդ փաստերը հաստատող տեղեկութիւնները այնպիսի արժանահաւատ և անկողմնապահ աղբիւրից են ստացված, որ այլ ևս կասկածել անհնարին է: "Times" լրագիրը, սակայն, հնարաւոր չէ համարում, այն անձանց համար, որոնց անմիջապէս վերաբերվում են դրանք, հրատարակել ամբողջապէս խմբագրութեան ստացած տեղեկութիւնները:

Բէլգիական "Indépendance Belge" լրագիրը, որ առաջ թերահաւատութեամբ էր վերաբերվում հայերի կոտորածի լուրին, այժմ յայտնում է, որ այդ լուրը հիմնված է զուտ ճշմարտութեան վրայ և նկարագրում է գործի բուն ընթացքը: միանգամայն համապատասխան մինչև այժմ նկարագրված իրողութիւններին:

Լօնդոնի "Daily News" տպագրել է մի թղթակցութիւն Կ. Պոլսից, որը նկարագրում է Սասունի կոտորածի արատափելի մանրամասնութիւնները: Թղթակցը ասում է, որ անհաւատալի, չը տեսնված խտուրթիւններ էին գործ դնում թիւրք զինւորները: Սասունի կոտորածին մասնակցող հեծելազույգը ստացաւ, ինչպէս պարզեւ, մի ոսկեայ դրոշակ:

Լօնդոնից հեռագրում են հետեւեալը. "Անգլիական զինուորական աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ, Կ. Պոլսի բրիտանական դեսպանութիւնը, ուրիշ պետութիւնների ներկայացուցիչների հետ միասին, բանակցում է, որպէս զի մի յատուկ, բոլորովին անկախ յանձնաժողով ուղարկվի գործերի զրուցիւնը քննելու համար Հայաստանում, առանց թիւրք պաշտօնականների մասնակցութեան:

Պետերբուրգի "Новое Время" լրագրին Լոնդոնից հեռագրում են նոյնքանի 28-ից. "Ներքին մի քանի եկեղեցիներում քարոզիչներ խիստ և ջերմ խօսքերով դատապարտում էին թիւրք կառավարութիւնը, յայտարարելով, որ թիւրքերը անբնական են բէթորմներ մտցնել: Ունկնդիր-

ները չափազանց զրոգւմ էին այդ քարոզչութիւնը: Հայկական հարցը կլանում է այստեղ ընդհանուր ուշադրութիւնը":

ՍԻՍԻ ՄԿԻՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՆԸ

Կիլիկիայի Հայկա քաղաքից տեղական հայոց առաջնորդական տեղապահ Նոյնմբերի 15-ից հեռագրել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, որ Սիսի Մկրտիչ կաթողիկոսը, որ մի քանի ժամանակից ի վեր հիւանդ էր, վախճանվեց:

Նա մեռաւ մօտ 80 տարեկան հասակում: 1860 թ.ին եպիսկոպոս ձեռնադրվեց Էջմիածնում, Մատթէոս կաթողիկոսի ձեռքով: Եպիսկոպոս ձեռնադրվելուց յետոյ նա առաջնորդական պաշտօն վարեց Կիլիկիայի գանապահ: Թեմերում, Եփրատ, Ատանա, Մարաշ:

1870 թ.ին, երբ Սիսի կաթողիկոսի ընտրութեան առթիւ բաւական աղմուկներ բարձրացան և հարցը բաւական ձգձգվեց, Մկրտիչ եպիսկոպոսը կարողացաւ աջողկեցնել իր թեմանում թիւրք և 1871 թ.ին ապրիլ ամսին, Թիւրքաց կառավարութեան պէրաթով, նա նստեց Սիսի կաթողիկոսական աթոռի վրա:

Ամբողջ 24 տարի, ուրեմն մօտ մի քառորդ դար, նա Սիսի, կամ ուրիշ խօսքով՝ ամբողջ Կիլիկիայի կաթողիկոս էր, և իր ձեռքի մէջ էր բերել այդ հայկական Չերնոգորիայի կրթական և եկեղեցական գործերի ղեկը:

Սակայն մի ամբողջ քառորդ դար կաթողիկոս լինելով, նա ոչինչ չէ շինեց: Ճշմարիտ, մի մեծ գաղափար է, թէ ինչպէս կարելի է ամբողջ 24 տարի մի ժողովրդի հոգեւոր հայր լինել, մեծամեծ բարոյական պարտաւորութիւններ ստանձնել, և նոյն իսկ այն միջոցին, երբ ժողովուրդը խրված է տգիտութեան մէջ, երբ եկեղեցին իր ամբողջ հոգեւորականներով ներկայացնում է աւերակների մի կոյտ, — ոչինչ չանել և ոչինչ չը գործել:

Մկրտիչ կաթողիկոսը յիմար մարդ էր և ոչ էլ շատ տղէտ: Ընդհակառակն, նա վերին աստիճանի ճարտար, Կաթողիկոս մարդ էր, և դրա հետ միասին հաստատ կամքի տէր:

Սակայն իր բոլոր եռանդը, իր բոլոր ոյժը նա գործ դրեց միմիայն իր անձնական փառասիրութեան, իր փափակ կյանքի, և իր կապի ի գնեւորի վրա: Ութսունական թվականներին նա մի ահագին, կատաղի կռիւ սկսեց Կ. Պոլսի պատրիարքարանի դէմ, աշխատելով թիւրքաց կառավարութեան աջակցութեամբ, կոտորել իր կապերը պատրիարքարանի հետ, և անմիջական յարաբերութիւնների մէջ մտնել թիւրք կառավարութեան հետ, մոռանալով, որ ինքը կոչված է ոչ թէ Կաթողիկոս, այլ զրուցիւն, անսաման իրաւունքներ ձեռք բերելու և հարստութիւն զիջելու, այլ

ժողովրդին ծառայելու, նրա ցաւերը դարմանելու: Շրջապատելով իրան զանազան ստոր շողորթներով և հազկատակներով, կտրելով իր բոլոր յարաբերութիւնները ժողովրդի հետ, մոռանալով իր կաթողիկոսական պարտաւորութիւնները, Մկրտիչ կաթողիկոսը, նոյն իսկ ամբողջ մի քառորդ դար կաթողիկոս լինելով, ոչինչ չը շինեց, և մեռնելով, չը թողեց Կիլիկիայի մէջ աչքի ընկնող մի իշխանակ, աչքի ընկնող մի որ և է գործ... Նրա մահը ոչինչ ապաւորութիւն չը թողեց, նա ամբողջ էր միայն իր և իր շրջապատողների համար, իսկ ժողովրդի համար՝ նա վաղուց մեռած էր:

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՅՅԱՏՈՒԹԻՒՆ

Մեր հրաժարականի առթիւ կրկնու հայ թերթերը (Արձագանքը) և անսուն թերթը) տպեցին բազմաթիւ յեղաշրջված լուրեր, անուանաւորութիւններ և հայոյանքներ: Հասարակութիւնը ընտելացել է դրանց այդպիսի վերաբերմունքին: ղէպի ամեն մի խնդր, ուստի աւելորդ է ուշադրութիւն դարձնել դրանց վրա: Իմ ցանկութիւնն է միայն համառօտ և ժամանակագրական կարգով բացատրել մեր հրաժարականի շարժառիթները ի գիտութիւն հասարակութեան:

Կարողեի մանկավարժական ժողովը ներկայ թիւ յունիսի 3-ին արձակեց երկու աշակերտ և առաջարկեց դպրոցի վարչութեանը, որ պատասխանատուութեան ենթարկվեն վերակացուն և մի ուսուցիչ, որի ամբողջ մեղքը մի անաղի խօսակցութիւն էր: Հոգաբարձութիւնը յունիսի 7-ին միաձայն ընդունեց մանկավարժական ժողովի որոշումը և վճռեց հեռացնել նաև վերակացուն և ուսուցչին:

Կարապետ եպիսկոպոսը յունիսի 17-ին ներկայացրեց հոգաբարձութեան քննութեան՝ վերակացուն և եօթ աշակերտների գանգաւոր: Այսպիսի քննութիւն իմ բացակայութեամբ: Դեռ չարուճակվում էր քննութիւնը, երբ յանկարծ, յունիսի 21-ին, առաջնորդը դրաւ որ տաշարկում է հոգաբարձութեան լազատ կացուցանել ամբողջ ուսուցչական խումբը:

Հոգաբարձութիւնը անկանոն և անհիմն համարելով այդ առաջարկութիւնը՝ թողնում է անհետեւ, իսկ իրաւագանցութեան համար բողոքում է կաթողիկոսին:

Գիւլիսի 4-ին, հոգաբարձութիւնը վերջացնելով քննութիւնը, կայացնում է հետեւեալ վճիռը. Հառաջարկել վարչութեան՝ պատժի ենթարկել այդ աշակերտներին ուսուցչական ժողովի որոշմամբ և

հոգաբարձութեան գիտութեամբ: Ամառ էր, ուսուցիչների մեծ մասը բացակայ էր քաղաքից, ուստի կանոնաւոր մանկավարժական ժողով գումարել անկարելի էր: Կաթողիկոսին ուղարկվեց վերակացուն և 7 աշակերտների ամբաստանողական գանգաւորների մանրամասն քննութիւնների եղբակցութիւնը:

Գիւլիսի կէսուր գալիս է Եփրատ, իբրեւ քննիչ, Կիւրեղ վարդապետը, որը հենց առաջին բաղկից յայտնում է, որ՝ կանոնաւորութիւնը ոչ մի նշանակութիւն չունի և թէ և պիտակոյսի կամքը հոգաբարձութեան համար օրէնք է:

Ոչ ոք ուսուցիչներից, հոգաբարձուներից, ծնողներից և աշակերտներից հարց ու փորձի չենթարկվեց, բացի 7 աշակերտներից, կրօնուսուցից և մի քանի կողմնակի անձներից, բոլորին յայտնի խտրականներից և ուսուցչական խմբի թշնամիներից: Երբ քննիչը դրանց, հոգաբարձութիւնը և ուսուցիչները դիմեցին կաթողիկոսին մանրամասն զեկուցումով՝ քննիչի և եպիսկոպոսի արածների մասին:

Օգոստոսի 10-ին, ուսուցիչների կողմից եւս գրեցին Էջմիածին, բացատրութիւններ տալու համար վեհախառն: Էջմիածնում իմացայ, որ կանչված են առաջնորդը և երկու հոգաբարձուներ:

Երկու հոգաբարձուները և եւս խնդրեցին Կաթողիկոսից կանոնաւոր առեան բանալ: Եւս յայտնեց, որ պատասխան եմ իսկոյն հրաժարվել, ապացուցելու համար, որ ինձ հետաքրքրում է ճշմարտութիւնը և սկզբունքը. սակայն պահանջում էի նշանակել խիստ դատաստան, որ վերջ դրվի այն մարդկանց սանձարձակ կամայականութեան և անպատկառ ինտրիկների, որոնց համար ոչինչ սրբութիւն չը կայ:

Վեհափառը յայտնեց մեզ, որ աւելորդ է համարում կանոնաւոր առեան բաց անել և երեսաւ երես հարց ու փորձ անել: Օգոստոսի 26-ին չնորոգեց հոգաբարձութեանը մի կոնգակ, որի մէջ ստված է:

«Ի պատճառս զօրութեան»՝ ծագելուց ընդ մէջ հոգաբարձութեանը և տեսչի դպրանոցի ի միոյ կողմանէ և գեր, առաջնորդի թեմի ի միւս կողմանէ, զկի ինչ ինչ գործողութեանց մերոց առ ի վախճան զնել առ տեղեւան խուրվութեանցն հարկ համարեցաք կոչել այսր ի Մայր Աթոռ զեր. առաջնորդ վիճակիդ և զերկուս ի պատուարժան հոգաբարձուացդ ի լուսաբանութիւն բարդ խնդրոյս դպրանոցիդ: Եւ զկի ընթերցելով զգրաւոր տեղեկութիւնս ըստ այսմ գործոյ, և այժմ լուեալ մեր բանիւ բերանոյ զբացատրութիւնս գեր, առաջնորդի, երկուց հոգաբարձուաց և տեսչի դպրանոցիդ, արժան դատեցաք թոյլ տալ հոգաբարձուացդ և տեսչի զալ ի քաղաքը և

վերջապէս սա դարձաւ ետ, նայեց ղէպի մոլթ անկեւոր, հրամայեց հիւրին հաց բերել և ապա ասաց.

—Մէր սէրան, սէր ձեզան. մեր աղան շատ յոգեանոց կը լինի. չի կամենայ որ իրան հանգիստ թողնեք զնեւոր:

—Օ՛ր, ո՛ր, ասաց աշխուժով Պետոն—իմ մեծ եղբայր շատ բարի է, եւ այնքան յոգնած չեմ, շտապում էլ եմ... իմ պատկառելի եղբորս անունը ինչ է.

—Ֆրանս:

—Ֆրանս աղան եղբէ է Մշոյ երկիր:

—Ո՛չ, ես մինչև խնուս, Կարա-Նոբան գնացել եմ, բայց ոչ հեռու... լսել եմ որ Մշոյ երկիրը Աստուծոյ արքայութեան պէս սիրուն է:

—Այո, մեր երկիրը սիրուն է: Բայց իմ եղբայրը լսել է, որ այժմ այդ երկրում խիստ կռիւ կայ, որ բոլոր աշխարհները ոտքի են եկնում:

—Լսել եմ, ասաց քիւրդը. փրանքը մեզ լուր են բերում. զեռ այսօր էր, որ մի խումբ տկուրներ, առանց հացի ու կիսամեռ, անցան մեր գիւղից. ոչինչ չունէին վարձատրելու առաջնորդի համար. ճանապարհը ցոյց տուին: Կնիկներ էլ կային իրանց հետ... Է՛հ, մարդու խեղճն է գալիս, ինչ կեանք է դրանց կեանքն էլ. նամարդութիւն է ներանց այդ վիճակի մէջ դիպչել ու վնասել... ասաւ էին, ոտները բոքիկ, մերկ... ոչինչ չունէին:

—Ֆրանսերը հարուստ են, մէջ մտաւ մի քիւրդ, որ տանուտիրով կողքին էր նստել.—բայց խորամանկ են, իրանց հարստութիւնը ծածկում են:

—Չէ, Ռազախ, պատասխանեց նրան Ֆրանս—ես էլ ֆէրա շատ եմ տեսել, նրանց հետ շատ եմ

գործ ունեցել, բայց նրանք որ անցան այսօր, ոչինչ չունէին. դուրսը թէ տեղ էլ հասնին. կէսը ցրտեց, կէսն էլ անթոյնութիւնից՝ կը կոտորվեն. զեռ տեսնեք, սասմանապահ՝ զօրքերը կը թողնեն նրանց անցկանալու:

—Միթէ չեն թողնում, հարցրեց Պետոն:

—Ո՛րտեղից... չղթայ են կազմել ու ետ են մղում. սասմանալիքի գիւղերում, Գլախ-Բարայի վրայով գնացողներով լի են: Ետեւորը մի կերպ անցել են, բայց և շատերը հենց ցրտից կամ քաղցից տեղն ու տեղն ընկնում են: Իմ եղբայրս չը գիտէ, որ Մշից եկածները ոչինչ չունեն:

—Ես այդ գիտեմ, հարցմամբ պատասխանեց Պետոն—բայց չը գիտէի, որ սասմանապահները չեն թողնում անցնելու:

—Այո, չեն թողնում, պնդեցին միւս քիւրդերը:

—Իսկ այն կողմից շատ անցողիներ կան:

—Առաջ ոչ այնքան, պատասխանեց մի երրորդ քիւրդ—իսկ այժմ այս կողմից են անցնում, որովհետեւ թէ արգելվում են այն կողմից և թէ Արփաչայի ձորում թալանվում ու սպանվում են:

—Նրանց թալանողները նամարդ են *): են... դիտեց ուժգնութեամբ տանուտէրը.—ընկա՞ծին կը խփեն:

—Հասնանցիներն են, ասաց տանուտիրով փոքրիկ եղբայրը. բոլորովին տկուրացնում են, չապիկին անգործ հանում...

—Սարափեի է, գոչեց դալոյթով Ֆրանս—էլ տղամարդութիւն չը մնաց կրմանջի մէջ, էլ ոչ ոք չէ յիշում, որ լազար ըփղին չէրըր առ—(ամօ-

*) Տմարդի:

թը կրօնից առաւել է)... էլ ամօթ չը մնաց կրմանջի մէջ. ինչ անեք, որ գետուր են:

—Մեր չէլըր աւելի լաւ և արդար է վարվում, ասաց չորրորդ քիւրդը—առնում է ամեն ինչ այդ ֆրանսերից, յետոյ հանգիստ թողնում:

—Ֆրանսերը լաւ աշխատում են, ծիծաղեց մի քիւրդ.—նրանք աշխատում են մեղ համար. համ էլ սիրուն կանայք ունեն:

—Եղբայրս ճիշդ ասաց, մէջ մտաւ Պետոն ճիշդ է, որ ֆրանսերը սիրուն կանայք ունեն... եղբայրս շատ է տեսել:

—Եւս... խնուս, Բասէն:

—Իսկ անցնողների մէջ, հարցրեց Պետոն անձկութեամբ—օրինակ հենց այսօրվայ անցած խմբի մէջ:

—Ռազախը նրանց չը տեսաւ, ասաց Ֆրանս—բայց ես տեսայ. երկու երեք հատ շատ սիրուններ կային. մերոնք ուղեցին ձեռք տալ, ես չը թողի. ես չեմ ուզում, որ մեր կողմից անցնող կանայք անպատկառ ենթարկվեն: Եւ չէլի մարդ եմ. առանց էն էլ կնիկ պահել շատ զրգար է այս կողմերում. իսկ անպատկառ մի թըշ-

ւառի, որ ցրտից ու քաղցածութիւնից մեռնում է—դրանից վատթար նա մէրդ ու թիւն չէ կա-

րող լինել:

Պետոն այլ ևս չէր լսում քիւրդի խօսքերը: Նա մտքով՝ անցնող խմբի հետ էր: Աչքի առջն էր բերում իր Նազնիկին, որ կիսամերկ, ձիւնը կոխելով, ոտաբոքիկ և քաղցած քարշ էր գալիս, ամեն մի բազէ ենթարկված լինելով զեռ անպատկառութեան մէջ ընկնելու... իսկ ինքը, նրան սիրողը մի քանի քայլ հեռու էր միայն և զեռ

անշարժ նստել էր ու կարողանում էր տանել քրդերի խօսակցութիւնները:

Ֆրանսի խօսքերից յետոյ բոլորն էլ լռեցին: Քիւրդերը նկատեցին, որ Պետոն մտածում է. տեսնում էին նրա ղէկքի ցաւազար արտայայտութիւնը, նրա յուզմունքը:

—Իմ արան մի ցու. ունի, հարցրեց տանուտէրը—մեք ունենք ցաւ ինամող պառաւներ... կամ վիրաւորված է արդեօք:

Երիտասարդը ցնցվեց: Ձեռքով տորեց ճակատը, յետոյ չորջը մի ակնարկ ձգելուց յետոյ, ոտքի ելաւ:

—Ո՛չ, ասաց նա—վիրաւորված չեմ:

—Եղբայրս ուղում է գնալ արդէն:

—Այո, ասաց նա մտածելով—ուղում եմ... միայն ինձ ասե՛ք, թէ այդ ձեռք ասած այսօրվայ խումբը ինչ ճանապարհ անեց:

Ոչ ոք չը պատասխանեց նրան: Նա դարմացմամբ զննեց քիւրդերին և յանկարծ նկատեց, որ նրանց մէջ կապած էր զարթեցնելու Ետապեց ուղղել սխալը՝ պարզելով իր հարցի նպատակը:

—Ես պէտք է գնամ նրանց ետեւից, ասաց նա—որովհետեւ երկու տարի է, որ ուղում եմ մի ֆրա աղվկայ. այդ աղվկը անցող խմբի մէջն է լինելու: Մշոյ դաշտից մինչև այստեղ եմ եկել:

—Վան, ասաց մի քիւրդ—այդքան միթէ մի-րուն ֆրայի աղվկի կար նրանց մէջ. ես չը տեսայ:

—Իմ եղբայրս շատ ջանիլ է, ժպտաց տանուտէրը—ֆրա աղվկը չարժէ, որ դու նրա համար Մշոյ դաշտից այսքան տեղ եկե՛իր գալիք, բայց

